ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 ապրիլի 2015թ. թիվ 12-Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՐԱՎՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱԿԱՅՔԵՐՈՒՄ ԵՎ ԴԵՊԻ ՎԵՐՋԻՆՆԵՐՍ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին> Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ 728 հրամանագրի 1.13-րդ կետի պահանջներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 16.04.2015թ. թիվ 1/34.2/4556-15 հանձնարարականի՝ Տավուշի մարզի զբոսաշրջային գրավչությունների շրջակայքերում և դեպի վերջիններս տանող ճանապարհների հարող տարածքներում պատշաճ վիճակ ապահովելու նպատակով՝

կարգադրում եմ.

1. Ստեղծել միջոցառումները համակարգող աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Գ. Բաղալյան – խմբի ղեկավար, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Ա. Մարդանյան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ ՏԾ ԳՀ վարչության բաժնի վարիչ

Ա. Սարգսյան -մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Ս. Գևորգյան -մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բաժնի վարիչ

Մ. Ղալումյան - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Բ. Սարգսյան - <Իջևանի ՃՇՇ> ՓԲԸ տնօրեն

Գ. Ադամյան - <Տավուշի ՃՇՇ> ՓԲԸ տնօրեն

Ֆ. Անտոնյան -<Լևոն երկրորդ> ՍՊԸ տնօրեն

Գ. Մանթաշյան - <Հաղարծին> ՓԲԸ տնօրեն

Տավուշի մարզի համապատասխան համայնքի ղեկավարներ/համաձայնությամբ/

2. Հանձնաժողովի նախագահին՝

1) Մարզպետարանի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզի ավտոճանապարհները սպասարկող կազմակերպությունների միջոցով ձեռնարկել ամենօրյա հսկողություն՝ մարզի զբոսաշրջային գրավչությունների շրջակայքերում և դեպի վերջիններս տանող ճանապարհների աղբահանության աշխատանքների կազմակերպման ուղղությամբ:

2) Սույն կարգադրության մասին իրազեկել մարզի համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին և մարզի ավտոճանապարհները սպասարկող կազմակերպությունների տնօրեններին:
3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

20 ապրիլի 2015թ.
ք. Իջևան